ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՇԵՄԻՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Երեւան 29-30 մայիս
1998 թ.

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՀՕՄ-Ը, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՌՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՕՄը, Հայաստանի կանանց կազմակերպութիւնները եւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններ՝ անմիջական լուծումի կարօտ ներազգային հարցերի ծիրում

Առաջին հիմնաւորում.- Հայաստանի ապագան մի մեծ չափով կախուած է կանանցից. կինն է ազգի շարունակութիւնն ապահովողը, ազգի կենսունակութիւնն ու բարոյական կերպարը կերտողը, ապագայ սերունդների դաստիարակներ հայթայթողը: Այսօր, երբ Հայաստանը վերջին եօթ տարիների սայթաքումներից ու տարուբերումներից ազատագրուած կանգնած է ճակատագրական մի անկիւնադարձի առջեւ, երբ Հայրենիք-Սփիւռք կամրջումը դիտւում է իբրեւ մէկ կարեւոր գրաւականը հայրենաշինութեան, Հայաստանն աւելի քան երբեք կարիքն ունի կանանց ներդրումին հայրենաշինութեան բոլոր բնագաւառներում:

Երկրորդ հիմնաւորում.- Սփիւռքի տարածքում ցրուած հայկական գաղթօճախներին ազգային նկարագիր տալու, հայ լեզուի, կրօնի, աւանդութիւնների, այսինքն՝ հայ հոգու փոխանցումը սերնդից սերունդ ապահովելու եւ վերջապէս նոր սերնդի ազգային ինքնութեան եւ ազգային պատկանելիութեան ձեւաւորման ու պահպանման գործում առանձնայատուկ դեր ունի սփիւռքահայ կինը: Այսօր, երբ Հայաստանի անկախութեան այս նոր փուլը նոր տեսլական է բացել սփիւռքեան իրականութեան առջեւ, երբ Հայաստան-Սփիւռք կամրջումը դիտւում է իբրեւ մէկ կարեւոր գրաւականը Սփիւռքի հայապահպանման, Սփիւռքն աւելի քան երբեք կարիքն ունի կանանց ներդրումին յիշած այդ բոլոր բնագաւառներում:

Այս հիմնաւորումներից ելնելով, կանանց ներդրումը թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայրենիքում, ես երեք մակարդակի վրայ եմ տեսնում. անհատական՝ ընտանիքում եւ աշխատանքի վայրում՝ իբրեւ մայր եւ ուսուցիչ, հասարակական՝ մշակութային, մարզական, եկեղեցական, կուսակցական ղեկավար մարմիններին իր մասնակցութեամբ եւ վերջապէս զուտ կանացի կազմակերպութիւնների

գործունէութեան գծով: Այսօրւայ այս կարճ զեկուցիս մէջ պիտի կենտրոնանամ երրորդ մակարդակով, այսինքն՝ կանանց կազմակերպութիւնների խողովակով, հայ կնոջ գործունէութեան եւ ապագայ կարելիութիւնների վրայ, մանաւանդ՝ շեշտելով Հայրենիքի ու Սփիւռքի կանանց կազմակերպութիւնների փոխյարաբերութիւնների կարեւորութիւնը:

Սփիւռքի կառոյցներում գործող կանանց կազմակերպութիւնները շատ բազմազան են, եկեղեցասիրած կանանց օժանդակ միութիւններից մինչեւ աղքատախնամ, մինչեւ բարեսիրական, կրթական, մշակութային, կամ վերջերս շատ մեծ յաւակնութիւններով, համաշխարհային բնոյթի ու տարողութեան ձգտող միութիւններ: Այդ բոլորի մէջ պիտի վերցնեմ ՀՕՄը. ո՛չ միայն որովհետեւ նիւթս դա է պահանջում, այլ որովհետեւ ՀՕՄի ընտանիքից դուրս գտնուելով, բայց միեւնոյն ժամանակ նրա գործունէութեան լաւատեղեակ լինելով, դրսից դիտելով, կարող եմ վստահօրէն հաստատել, որ ՀՕՄն անհամատեղելի մակարդակի վրայ է կանգնած: Բայց այստեղ աւելի ճիշտ ընկալուելու համար, փութամ նշել մի ցաւալի իրողութիւն. այս կազմակերպութիւններից եւ ո՛չ մէկը, եւ ո՛չ նոյնիսկ ՀՕՄը մեծ դերակատարութիւն չունեն Սփիւռքի ազգային քաղաքականութեան ճշտման մէջ, այլ խօսքով՝ կինը դերակատար չէ Սփիւռքի կառոյցների ղեկավարման, ուղղութիւնների ու քաղաքականութիւնների ճշտման ու դէպի ապագայ առաջնորդման մէջ: Իսկ Հայաստանում, մանաւանդ վերջին տարիների կնոջ իրավիճակի վատթարացումից, նրա դէմ ի գործ դրուած խտրականութեան եւ ճնշումների շեշտաւորումից բխած, ստեղծուել են քսանից աւելի կանանց կազմակերպութիւններ, իւրաքանչիւրը իր հասարակական-ընկերային նպատակներով ու գործունէութեամբ: Այստեղ եւս նոյն դառը հաստատումը. հայ կինը Հայաստանում, կամ կանանց կազմակերպութիւնները իրենց կառոյցի, գործունէութեան եւ կարողականութեան համեմատութեամբ դերակատար չեն Հայաստանի ընկերային ու քաղաքական կեանքում: ՀՀ օրէնսդրութիւնը Հայաստանի քաղաքական, սոցիալական, մշակութային եւ այլ բնագաւառներում կանանց մասնակցութեան որեւէ արգելք չի բովանդակում: Սակայն իրականացման ընթացքում հաւասարութիւնը ոտնակոխւում է. հակառակ նրան, որ գոյութիւն ունեն մեծ թւով բարձր կրթութիւն ունեցող կանայք, բայց նրանք չեն ներառնուում երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային ղեկավար շրջանակներում: Գոյութիւն ունեցող օրէնքներն աշխատանքի եւ աշխատունակութեան վերաբերմամբ աշխատանքի չգոյութեան պատճառով չեն իրագործուում: Կատարածս հաստատումները կարող եմ հիմնաւորել

վիճակագրական տեւալներով, բայց պատկերն այնքան յստակ ու բացարձակ է, որ դրա կարիքը չեմ տեսնում: Այո, այսօր ամբողջ հայ ազգը իր երկրի ու արտերկրի կառոյցներով բացարձակօրէն ղեկավարւում է տղամարդկանց միջոցով (male dominated society): Բացի մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւնների ղեկավարութիւնից, շատ քիչ պարագաներում է, որ կինն առիթ ունի մուտք գործելու ղեկավար բարձր շրջանակներում և նման պարագաների, առնւազն մէկ գլուխ աւելի բարձր պիտի լինի իր պաշտօնակիցներից (եւ սա ես խոսում եմ իմ անձնական փորձառութիւնից):

Կանայք թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայրենիքում ներգրաւած են հասարակական այն կազմակերպութիւնների մէջ, ուր նպատակը մարդասիրական է, օգնութիւն աղքատներին, որբերին, անօգնականներին, բայց միթէ՞ միայն սա է կնոջ տաղանդը: Ուշադիր նայեցէք Հայաստանում կազմւած կանանց կազմակերպութիւնների հետապնդած նպատակներին, բացի մի երկուսը, որոնք որեւէ կուսակցութեան հովանու տակ են գործում, մնացեալի գործունէութիւնը ընդգրկում է նման բնագաւառներ՝ բարեսիրական օգնութիւն, խնամք կարիքաւոր մայրերին ու երեխաներին, պայքար՝ կանանց դէմ խտրականութեան վերացման համար թէ՛ ընտանիքում եւ թէ՛ հասարակական կեանքում, պայքար՝ գիտութեան, արւեստի ու քաղաքական մարզերում կանանց մասնակցութիւնը քաջալերելու եւ ապահովելու համար: Որոշ չափով տարբերւում են աւելի նեղ իւրայատկութիւններով կազմակերպւածները, օրինակ՝ կանանց համահաւասար իրաւունքի պաշտպանում օրէնսդիր մարմիններում, զօրակոչիկների համար բարենպաստ պայմանների հաստատում, կամ ուսուցչուհիների իրաւունքների հետապնդում: Ուժերը չջլատելու համար, աւելի նպատակաուղղւած եւ առանց ճապաղումի աշխատելու համար առաջարկում եմ միացում կամ աւելի ճիշտ վերադասաւորում, վերակազմակերպում, ինչպէս որ ես հաւատում եմ, որ Հայաստանի նոր իրականութեան լոյսի տակ տեղի պիտի ունենայ նաեւ կուսակցութիւնների ու հասարակական կազմակերպութիւնների պարագային: Եւ ՀՕՄը ատակ է դիւրացնելու այդ ճամբան, իր տասնամեակների փորձն ու արեւմտեան դիսիփլինի, աշխարհայեացքի ու գործելակերպի ծանօթութիւնը ի սպաս բերելու այդ վերադասաւորման, նպատակների ու գործելակերպի, համազգային թէ՛ միջազգային բեմ դուրս գալու ճամբին: Սփիւռքի եւ Հայաստանի կանանց կազմակերպութիւնների փոխյարաբերութիւնները այս մարզում անփոխարինելի արդիւնքներ կարող են ունենալ:

Փակագծի մէջ ուզում եմ նշում կատարել, յիշել մի հաստատում, որ յաճախ

էր լսում վերջին տարիներում, թէ հայ կնոջ հաւասար իրաւունքները կրթութիւն, ընտրելու և ընտրուելու իրաւունք, բժշկական ասպարէզ, արուեստ ու ճարտարարուեստ, գիտութիւն և այլն նախատեսուել և յարգուել են խորհրդային վարչակարգի ընթացքում, բայց անուշադրութեան են մատնուել յետխորհրդային, անկախ և ժողովրդավար Հայաստանում: Իհարկէ այն օրերին էլ այդքան փայլուն չի եղել իրավիճակը, բայց բոլոր բնագաւառների պէս էլ, քանի որ համեմատաբար աւելի բարենպաստ էին պայմանները, անցեալը երանելի է թւում: Այս երևոյթը կարելի է կոչել վտանգաւոր կարօտախտ (nostalgia), որի ազդեցութիւնը դրսեւորուեց վերջին ընտրութիւններում: Իրօք աւէրներ շատ է գործուել, որ պիտի սրբագրուի, աւէրներ սոցեալ-տնտեսական, քաղաքական, կենցաղային բնագաւառներում. իսկ այդ աւէրների մէջ ամենից խոցելին, ամենադժբախտ զոհը եղել է կինը: Կինը տառապել է իր անձի վրայ տեսնելով խտրականութիւն՝ շեշտուած զրկանք, գործազրկութիւն: Տառապել է իր քոյրերին տեսնելով բարոյական ստորացումի նողկալի ճահիճների մէջ ներքաշուած՝ մինչև պոռնկութիւն, մարմնավաճառութիւն, կանանց առուծախ երկրից արտածման չափով: Տառապել է իր ընտանիքի տնտեսական խղճալի վիճակի անկարող ականատեսը լինելով: Տառապել է իր ընտանիքի տղամարդու բացակայութեան (երբ տղամարդը աշխատանք փնտրելու, ընտանիքի հացը հայթայթելու պարտադրանքի տակ հեռացել է հայրենիքից) և կինը ամենադժուարին պայմաններում ստանձնել է թէ՛ հօր և թէ՛ մօր պարտականութիւններն ընտանիքում: Համայնավար վարչակարգի կործանումից յետոյ սկսուած նոր փուլը Հայաստանի Հանրապետութեան պատմութեան մէջ պիտի լինէր անցումային շրջան, պիտի դրուէին նոր արժէչափեր՝ սոցիալական, տնտեսական ու քաղաքական: Պիտի իրացուէր կամրջումը Հայրենիքի ու Սփիւռքի, պիտի իրացուէր մէկ Ազգ, մէկ Հայրենիք գաղափարը: Փոխարէնը վերջին եօթ տարիները եղան անկումի տարիներ ժողովրդի կեղեքման, մի առանձնաշնորհեալ փոքրաթիւ խաւի յղփացման, հայ կնոջ տառապանքի, մտաւորականութեան բարոյալքման, սոսկալի չափերի հասնող արտագաղթի և վերջապէս ներքին ու արտաքին ապազգային քաղաքականութեան հետապնդումի շրջան: Հիմա, այդ եօթ տարիները կորցրած, նորից ենք սկսում անցումային շրջանը, բայց այս անգամ ո՛չ թէ զերոյից, այլ զերոյից էլ վար մակարդակից: Այս իրականութեան լոյսի տակ պատշաճ ու ժամանակայարմար եմ գտնում այս գիտաժողովը, որ պիտի քննի ՀՕՄի ստանձնելիք դերն անցումային այս նոր շրջանը սահուն և արագ ամբողջացնելու:

Փակագիծը փակելով, կանանց կազմակերպութիւնների համար

կանխորոշուած, նախապէս յիշածս տարատեսակ գործունէութիւնն իր ամբողջ տարածքով կանանց համար նախապէս յիշածս տարատեսակ գործունէութիւնը իր ամբողջ տարածքով կանանց համար նախապատրաստական փուլ եմ համարում (stepping stone): Այս կազմակերպութիւնները, մանաւանդ ՀՕՄը և մանաւանդ՝ Սփիւռքեան իրականութեան ոլորտում, իրենց հարազատ ու մտերիմ մթնոլորտում հասարակական աշխատանքի առիթ են ընծայում, կանանց վարժեցնում վարչական (parliamenrarian) գործընթացին, ժողովրդավարական օրէնքներին՝ արձանագրութիւն կազմել, պաշտօնական նամակներ խմբագրել, զեկոյց պատրաստել, հասարակութեան մէջ կամ հենց ժողովներում ելոյթ ունենալ: Այս կազմակերպութիւնները, և դարձեալ մանաւանդ ՀՕՄը, Սփիւռքում կարևոր և շատ անգամ միակ գործօններն են կրթելու կանանց, զարգացնելու նրանց տաղանդներն ու կարողութիւնները՝ նրանց միջոցով ու նաև ուղղակի կերպով ազգային դաստիարակութիւն ջամբելու մատաղ սերնդին: Դա բաւական չէ: Պէտք է աւելի առաջ անցնել: Բայց չոգևորուենք անմիջապէս. կանգ առնենք ու հարց տանք մենք մեզ որպէս կին, որպէս Հայաստանի ու Սփիւռքի յառաջատար կանանց ներկայացուցիչներ, ցանկանո՞ւմ ենք տղամարդկանց հաւասար իրաւունքներ ունենալ և պատրա՞ստ ենք գործելու նշուած բոլոր ասպարէզներում: Ցանկանո՞ւմ ենք առաջանալ. ցանկանո՞ւմ ենք մեր արժանի տեղը գրաւել ընկերութեան մէջ. թ՞է մեր սահմանափակ տաքուկ ու հարազատ շրջանակներում, մեր ունեցած սահմանափակ դերերով մենք մեզ լաւ ենք զգում:

Այս կարճ զեկոյցի սահմանները չեն արտօնում պատմութիւնը պեղել և պատմական օրինակներով, նոյնիսկ օրէնքի գրքերով փաստել «հայկական աւանդոյթ» կոչուած հասկացութեան իրական իմաստը, որ մեզ է հասել կատարելապէս խեղաթիւրուած մեկնաբանութեամբ և որ կնոջ պարտադրել է ենթակայ իրավիճակ: Ժամանակները, օտար բռնապետութիւնները, խաւար ու յետադէմ մշակոյթների ազդեցութիւնները հայ կնոջը յետ են մղել, նրա յառաջադիմութեան դէմ պատնէշներ բարձրացրել. իսկ այդ պատնէշները վերացնելու համար՝

1) Պէտք է յաւելեայ ճիգ: Պիտի բարձրանանք, զարգանանք, լայնացնենք մեր մտային հորիզոնը, ինչ տարիքում էլ որ լինենք, ընկերային-տնտեսական որ դասակարգին էլ պատկանելու լինենք, գիտակցուած և ծրագրուած հաւաքական աշխատանքով, իրարու օգնելով և ո՛չ թէ իրարու ոտքի տակ փոսեր փորելով: Այսօրուայ միջազգային կանանց կազմակերպութիւնները, UNICEF-ի և UNESCO-ի հովանաւորութեան տակ, և քաղաքակիրթ աշխարհում կանանց համար բացուած

կանխորոշուած, նախապէս յիշածս տարատեսակ գործունէութիւնն իր ամբողջ տարածքով կանանց համար նախապէս չիշածս տարատեսակ գործունէութիւնը իր ամբողջ տարածքով կանանց համար նախապատրաստական փուլ եմ համարում (stepping stone): Այս կազմակերպութիւնները, մանաւանդ ՀՕՄը և մանաւանդ՝ Սփիւռքեան իրականութեան ոլորտում, իրենց հարազատ ու մտերիմ մթնոլորտում հասարակական աշխատանքի առիթ են ընծայում, կանանց վարժեցնում վարչական (parliamenrarian) գործընթացին, ժողովրդավարական օրէնքներին՝ արձանագրութիւն կազմել, պաշտօնական նամակներ խմբագրել, զեկոյց պատրաստել, հասարակութեան մէջ կամ հենց ժողովներում ելոյթ ունենալ: Այս կազմակերպութիւնները, և դարձեալ մանաւանդ ՀՕՄը, Սփիւռքում կարևոր և շատ անգամ միակ գործօններն են կրթելու կանանց, զարգացնելու նրանց տաղանդներն ու կարողութիւնները՝ նրանց միջոցով ու նաև ուղղակի կերպով ազգային դաստիարակութիւն ջամբելու մատաղ սերնդին: Դա բաւական չէ: Պէտք է աւելի առաջ անցնել: Բայց չոգևորուենք անմիջապէս. կանգ առնենք ու հարց տանք մենք մեզ որպէս կին, որպէս Հայաստանի ու Սփիւռքի յառաջատար կանանց ներկայացուցիչներ, ցանկանո՞ւմ ենք տղամարդկանց հաւասար իրաւունքներ ունենալ և պատրա՞ստ ենք գործելու նշուած բոլոր ասպարէզներում: Ցանկանո՞ւմ ենք առաջանալ. ցանկանո՞ւմ ենք մեր արժանի տեղը գրաւել ընկերութեան մէջ. թ՞է մեր սահմանափակ տաքուկ ու հարազատ շրջանակներում, մեր ունեցած սահմանափակ դերերով մենք մեզ լաւ ենք զգում:

Այս կարճ զեկոյցի սահմանները չեն արտօնում պատմութիւնը պեղել և պատմական օրինակներով, նոյնիսկ օրէնքի գրքերով փաստել «հայկական աւանդոյթ» կոչուած հասկացութեան իրական իմաստը, որ մեզ է հասել կատարելապէս խեղաթիւրուած մեկնաբանութեամբ և որ կնոջ պարտադրել է ենթակայ իրավիճակ: Ժամանակները, օտար բռնապետութիւնները, խաւար ու յետադէմ մշակոյթների ազդեցութիւնները հայ կնոջը յետ են մղել, նրա յառաջադիմութեան դէմ պատնէշներ բարձրացրել. իսկ այդ պատնէշները վերացնելու համար՝

1) Պէտք է յաւելեայ ճիգ: Պիտի բարձրանանք, զարգանանք, լայնացնենք մեր մտային հորիզոնը, ինչ տարիքում էլ որ լինենք, ընկերային-տնտեսական որ դասակարգին էլ պատկանելու լինենք, գիտակցուած և ծրագրուած հաւաքական աշխատանքով, իրարու օգնելով և ո՛չ թէ իրարու ոտքի տակ փոսեր փորելով: Այսօրուայ միջազգային կանանց կազմակերպութիւնները, UNICEF-ի և UNESCO-ի հովանաւորութեան տակ, և քաղաքակիրթ աշխարհում կանանց համար բացուած

առիթները կարող են օժանդակել մեր զարգացման և յառաջադիմութեան:

2) Պէտք է թիրախ դարձնենք գոյութիւն ունեցող ղեկավարութիւնը, իբրեւ մեր դաշնակից և զինակից մեր կողքին ունենանք ղեկավար շրջանակներին պատկանող այն մարդկանը, որոնք զարգացած են, կրթուած են, շփում ունեն այսօրուայ զարգացած աշխարհում տեղի ունեցող կանանց շարժումների և ընկերային յեղաշրջումների հետ: Այդ մարդկանց պիտի մղենք՝ ընդհանուր մտայնութիւնը փոխելու, ատակ և գործունեայ կանանց առիթ տալու, վեր քաշելու:

3) Հայաստանում պետութեան մակարդակով աշխատանք տանենք սրբագրելու Սահմանադրութեան մէջ տեղ գտած այն օրէնքները, որոնք արգիլում են կնոջ ազատ զարգացումը բոլոր բնագաւառներում: Աշխատանք տանենք արգիլելու ամեն խտրականութիւն, հաստատելու հաւասարութիւն: Պետութիւնը, եթէ պէտք է զանազան նախարարութիւններում կանանց յատուկ մասնեբաժիններ հաստատելով, պէտք է դիւրացնի այդ օրէնքների իրացումը:

4) Անհատական գետնի վրայ հէնց հիմքից պիտի սկսենք, պարարտ հող պատրաստենք, մեր արու զաւակներին չգերադասենք աղջիկներից և յատուկ առանձնաշնորհումներով չդաստիարակենք նրանց: Տղաների կրթութիւն տալը աւելի կարեւոր չդասենք, քան աղջիկներին: Այսինքն՝ պատրաստենք ո՛չ թէ male chauvinist-ներ, այլ կանանց դատի պաշտպան, սեռերի հաւասարութեանը հաւատացող հակառակ սեռի նկատմամբ յարգանք տածող արու զաւակներ. իսկ մեր աղջիկներին դաստիարակենք ո՛չ իբրեւ վաղուայ համեստ ու հնազանդ տանտիկինն ու ապագայ ընկերային կեանքում անմասնակից, կրաւորական հանդիսատեսը, այլ իբրեւ հաւասար բաժնեկիցը իր ապագայ ընտանիքում, մեր ազգային դատի պայքարողը, զարգացած ու կարող ղեկավարը մեր համայնքի բոլոր մարզերում ընկերային-հասարակական, կրթական, կրօնական, մշակութային ու բարեսիրական: Մեր աղջիկներին դաստիարակենք վճռական, իր անկախ անհատականութեան համար պայքարող՝ թէկուզ եթէ նա պահպանողական մտքերի հակադրութեան հանդիպի ընտանիքում, աշխատանքի վայրում, ընկերութեան մէջ: Այս կէտը ես ամենից կարեւորն եմ համարում, որովհետեւ եթէ անհատների, կնոջ եւ տղամարդու մտայնութիւնը պատրաստ չլինի լաւագոյն օրէնքներն էլ իրաւունք ու հաւասարութիւն չեն ապահովի:

Ես հաւատում եմ, որ հայ կնոջ հաւասար իրաւունքների հաստատումը պիտի ապահովի ապագայ ազատ մտածող, յառաջադէմ ընկերութիւնը թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի: Եւ մենք մեր ազգային նպատակներին հասնելու եւ այսօրուայ

համամարդկային ընտանիքում մեր պատւաւոր տեղը գրաւելու համար այնքան կարիքն ունենք այդպիսի ընկերութեան:

***

Մեր ներազգային կեանքում հարցեր կան, որոնք շատ նուրբ, ռազմավարական ծրագրումի կարիքն ունեն. անկախ Հայաստանի այս նոր փուլը եւ ապագայի տեսլականը մի նոր հարթակի վրայ է զետեղել այս հարցերը, որոնք, ես հաւատում եմ, միայն ու միայն Սփիւռք-Հայրենիք առողջ համագործակցութեամբ եւ սեռերի հաւասար ներդրումով պիտի լուծւեն. օրինակ՝

ա. Սկսելով եկեղեցական հարցերից, դնենք երիտասարդութեան փոխանցւելիք կրօնական դաստիարակութեան հարցը՝ առաջն առնելու համար աղանդաւորական շարժումների ներթափանցումների:

բ. Հայ եկեղեցու դերի ամրակայումը մեր առօրեայ կեանքում եւ նրա ազդեցութեան շեշտաւորումը մեր բարոյական եւ մարդասիրական աշխարհայեացքի վրայ:

գ. Բարեփոխումների անհրաժեշտութիւն հայ եկեղեցու մէջ, կանանց մասնակցութիւնը՝ մինչեւ ուր որ ատակ են, մինչեւ ուր որ ձգտում են հասնել:

դ. Սփիւռքի ապագան այսօրւայ Հայաստանի իրողութեան լոյսի տակ եւ այս ծիրի մէջ՝ Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւններ:

ե. Սփիւռքահայութեան հոգեբանութեան ձեւաւորումը, որ տարուբերւում է ուծացումի եւ գէտտոիզմի միջեւ: Այս հարցում, մանաւանդ Հայաստանից արտագաղթած հսկայ զանգւածի թողած ազդեցութիւնը Սփիւռքի հայաշատ գաղութների նկարագրի ու կառոյցի վրայ: Այս նիւթը պիտի ընդլայնել վաղւայ զեկոյցիս մէջ:

զ. Սփիւռքահայ կառոյցների գործնականութիւնը այսօր եւ դրանց փոփոխութեան ու արդիականացման անհրաժեշտութիւնը, նոյնիսկ, եթէ փոփոխութեան ենթարկւի Ազգային Սահմանադրութիւնը:

է. Սփիւռքահայի ազգային ինքնութիւնն իբրեւ քաղաքականութիւն եւ այդ ինքնութեան յարաբերութիւնը հիւրընկալ երկրների մշակոյթի եւ ազգային ինքնութեան հետ:

ը. Յառաջացումն ազգային գիտակցութեան եւ ինքնութեան նոր

հասկացողութեան, որ հաշտեցւած լինի սփիւռքահայի քաղաքացիական պատկանելութեան հետ:

թ. Չզարմանաք, բայց ազգային գիտակցութեան ձեւաւորում Հայաստանում, այն որ պայքարել ենք պահելու համայնավար վարչակարգի օրօք եւ անուշադրութան մատնել վերջին տարիներին:

ժ. Հայաստանի կրթական համակարգի, մանաւանդ հայեցի նիւթերի դասաւանդման ծրագրաւորման, նորագոյն մեթոդների ու միջոցների օգտագործմամբ դասագրքերի եւ ուսուցիչների պատրաստութեան հարց, որ դարձեալ պիտի փորձեմ ընդլայնել վաղւայ զեկոյցիս մէջ:

Այս բոլորը եւ դեռ այլ հարցեր, որոնք հնարաւոր չէ նշել ամբողջութեամբ, պիտի ունենան մտածւած ծրագրաւորում. չպէտք է պատահականութեան թողնեն, այլապէս կը կորենք, կուլ կգնանք: Մենք, կիներս, ուզո՞ւմ ենք այս դժւարին հարցերի լուծումը գտնելու ծանր բեռը կիսել, թէ՞ ոչինչ, դա տղամարդու գործ է, թող իրենք որոշեն: Այդպէս մտածողները դատապարտելի են: Պիտի մասնակից լինենք, դերակատար լինենք, պատասխանատուութեան բեռը կիսենք:

Այսօր, երբ կանգնած ենք քսանմեկերորդ դարու սեմին, երբ Հայաստանի հայը իրապէս ստացել է իր ազատութեան ու անկախութեան պարգեւներ վայելելու կարելիութիւնը, երբ հաւատում ենք, որ ազգային գաղափարախօսութիւնը լինելու է մեր հայրենի պետութեան ներքին ու արտաքին քաղաքականութեան արժեչափն ու առաջնորդող ոգին, հայ կանանց կազմակերպութիւնները թէ՛ Սփիւռքում եւ թէ՛ Հայրենիքում կանգնած են նոր մարտահրաւէրների առջեւ: Նրանց ուսերին աւելի մեծ բեռ է ծանրացած: Այդ մարտահրաւէրների ամբողջութիւնը ես ազգակերտում պիտի կոչէի: Եթէ Հայաստանում ապրող հայը պիտի ազատագրւի համայնավար վարչակարգի ու գաղափարաբանութեան կերտած «սովետական մարդու» նկարագրից, իր բոլոր երեսներով ու յատկանիշներով, եթէ սփիւռքահայը պիտի դաստիարակւի ազգային ինքնութեան ու պատկանելութեան զգացումով, եթէ պիտի ձերբազատւի Ցեղասպանութիւնից վերապրած զոհի իր հոգեբանութիւնից, եթէ Հայրենիքում ու Սփիւռքում ապրող հայերը պիտի մօտենան ու նրանց նկարագրի, աշխարհայեացքի, կենցաղի, աւանդութիւնների ու սովորութիւնների ու նոյնիսկ լեզուի տարբերութիւնները, որ շատ պարագաներում խորն է գահավէժ վիհի պէս, պիտի վերացւի, հայ կանանց կազմակերպութիւնները պիտի լինեն դերակատար՝ ծրագրաւորւած առաջանալու, միաւորւած աշխատելու, արհեստավարժական հիմունքներով բաժանելու աշխատանքը եւ սեւեռուն շեշտաւորումով քայլելու դէպի նպատակ: